Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16 փետրվարի 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Վ. Միրզոյանը,
Հանձնաժողովի անդամներ Է. Մխիթարյանը, Ա. Մակարյանը և Ս. Աբազյանը:
Քարտուղար՝ Արտավազդ. Սարգսյանը:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

«Ջրային կոմիտեի» կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2 ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ **Տուրբոլայն ՍՊԸ-ն և Գարանտ Մոթորս ՍՊԸ-ն**՝ սահմանված ժամկետում ներկայացրել են գնահատող հանձնաժողովի 09.02.2024թ. թիվ 2 որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերով մասնակիցներ **Տուրբոլայն ՍՊԸ-ն և Գարանտ Մոթորս ՍՊԸ-ն** շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել Տուրբոլայն ՍՊԸ-ին,
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2 ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,

3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2 ծածկագրով ընթացակարգի ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2 ընտրված մասնակից Տուրբոլայն ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

նախագահ — Վ. Միրզոյան

անդամներ — Է. Մխիթարյան

Ա. Մակարյան

Ս. Աբազյան

Քարտուղար — Ա. Սարգսյան